

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-23/4**

ք.Երևան

« 17 » օգոստոս 2023թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Կարապետյանի, որը գործում է «ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Մարգարա» մաքսային կետի կառուցման (2-րդ փուլ) աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում՝ սկսվում և իրականացվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ռոջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ռոջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի ( էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը և երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝

վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **620 828 138 (Վեց հարյուր քսան միլիոն ութ հարյուր քսանութ հազար մեկ հարյուր երեսունութ) ՀՀ դրամ**, ներառյալ՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները:

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական ռեսուրսի անհրաժեշտ է կենցաղային սպասարկման շինությունների չնախատեսում	ՎԻՎՕ-ի 157 <sup>8</sup> հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված
2	կանաչապատ տարածքներում չեն իրականացվել պահպանման ենթակա տնկիների, ծառերի, թփերի, բույսերի և բուսական գրունտի առանձնացում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության չեն իրականացվել ծառերի և թփերի տեղափոխում	ՎԻՎՕ-ի 157 <sup>8</sup> հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված
3	շինարարության համար նախատեսված տարածքում չեն իրականացվել բուսական ծածկույթի (ծառերի, թփերի, բույսերի և այլն) բների հանում, մաքրում, տարածքում առկա և պահպանման ոչ ենթակա բուսական շերտի առանձնացում արմատներից, տարածքի մաքրում ծառերի բներից և թփերից	ՎԻՎՕ-ի 157 <sup>8</sup> հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված
4	շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի առողջության ապահովման, ինչպես նաև շրջակա միջավայրի համար չեն ստեղծվել անվտանգ ու սանիտարահիգիենիկ պայմաններ, չեն տրամադրվել անհատական պաշտպանական միջոցներ (հատուկ արտահագուստ, սաղավարտ, կոշիկ և այլն), չի իրականացվել աշխատակիցների հրահանգավորում՝ անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ :	ՎԻՎՕ-ի 157 <sup>8</sup> հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված
5	չի լրացվել աշխատանքների վարման մատյան, չի կազմել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտեր	ՎԻՎՕ-ի 157 <sup>8</sup> հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված
6	Շինարարական աշխատանքների ողջ ընթացքում չեն պահպանվել օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները	ՎԻՎՕ-ի 157 <sup>8</sup> հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:**

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 43 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

### 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե  
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011030526  
ՀՎՀՀ 02647057  
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

#### ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ  
ք. Երևան, Արցախի պողոտա 55  
«Արմսվիսբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 2500010982360100  
ՀՎՀՀ 00403814  
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ի տնօրեն՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)



Ա.Կարապետյան

(ստորագրություն)



**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ\***  
**«ՄԱՐԳԱՐԱ» ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (Զ-ՐԴ ՓՈՒԼ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

<<Մարգարա>> մաքսային կետի կառուցման (2-րդ փուլ) աշխատանքները կատարել՝ համաձայն կից ներկայացվող ծավալաթերթ-նախահաշիվների և նախագծանախահաշվային փաստաթղթերի: Հանաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10 հուլիս 2023 թ.թիվ 57-Ա հրամանի հավելվածի՝ օբյեկտի նախապատրաստումը պետք է նախատեսի ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից նախագծային փաստաթղթերի (ներառյալ գոյություն ունեցող օբյեկտի վերակառուցման դեպքում կոնստրուկցիաների տեխնիկական հետազննության արդյունքների փաստաթղթերի) ուսումնասիրություն, շինարարության պայմաններին մանրազննին ծանոթություն, արտահրապարակային ու ներհրապարակային նախապատրաստական աշխատանքներ, շենքերի, շինությունների և նրանց մասերի կառուցման, ինչպես նաև անմիջական նախապատրաստական փուլի աշխատանքների իրականացման նախագծերի մշակում՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի անվտանգության պահանջները:

Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական ռեսուրսի՝ անձնակազմի համար անհրաժեշտ է նախատեսել կենցաղային սպասարկման շինություններ (օրինակ՝ սանհագույց, բուժկետ, հանգստի սենքեր և այլն), կանաչապատ տարածքներում իրականացվում է պահպանման ենթակա տնկիների, ծառերի, թփերի, բույսերի և բուսական գրունտի առանձնացում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ծառերի և թփերի տեղափոխում այլ տարածքներ՝ դրանցում կանաչապատում ապահովելու նպատակով,

շինարարության համար նախատեսված տարածքում իրականացվում է բուսական ծածկույթի (ծառերի, թփերի, բույսերի և այլն) բների հանում, մաքրում, տարածքում առկա և պահպանման ոչ ենթակա բուսական շերտի առանձնացում արմատներից, տարածքի մաքրում ծառերի բներից և թփերից,

ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա կանաչ տնկիները անհրաժեշտ է ցանկապատել (ցանցապատել), շինարարական հրապարակի տարածքում առանձին կանգնած ծառերի բները պաշտպանել վնասվածքներից՝ փաթեթավորելով ատաղձափայտով: Առանձին կանգնած թփերն անհրաժեշտ է վերատնկել: Կանաչապատման համար պիտանի ծառերն ու թփերը պետք է վերատնկվեն դրանց համար նախատեսված հատուկ պահպանական գոտում:

Ծառաթփուտային (ծառաթփային) բուսականության հատումը և արմատների վզիկների և աճող ծառերի բների հողալցումն անհրաժեշտ է իրականացնել միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում: Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի առողջության ապահովման, ինչպես նաև շրջակա միջավայրի համար պետք է ստեղծվեն անվտանգ ու սանիտարահիգիենիկ պայմաններ, տրամադրվեն անհատական պաշտպանական միջոցներ (հատուկ արտահագուստ, սաղավարտ, կոշիկ և այլն), պետք է իրականացվի աշխատակիցների հրահանգավորում՝ անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ: Անհրաժեշտ է լրացնել աշխատանքների վարման մատյան, կազմել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտեր, անհրաժեշտության դեպքում ձևակերպել այլ շինարարական նորմերով և կանոններով նախատեսված լրացուցիչ կատարողական փաստաթղթեր:

Շինարարական աշխատանքների ողջ ընթացքում՝ պետք է պահպանվեն օդի փոշուտվածության և գազուտվածության կանխարգելման պահանջները: Փոշու արտանետումների կանխարգելման համար շինությունները պետք է առանձնացվեն արտաքին միջավայրից ամբողջ բարձրությամբ անթափանց թաղանթով, չոր եղանակային պայմաններում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար պետք է խոնավեցվի ջրի շիթով, հրապարակը պետք է համալրվի հղկման աշխատանքների արդյունքում գոյացած փոշու արտանետումները բացառող սարքերով, տեխնոլոգիաներով, շինարարական նյութերը՝ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պետք է պահվեն կամ պահեստավորվեն փակ տարածքներում, ծածկվեն անթափանց թաղանթով, շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը պետք լվացվեն ջրի շիթով: Տարածքի միկրոկլիմայի բավարար պահանջների ապահովման համար բարեկարգման տարրերի և միջոցառումների ընտրությունը անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով աշխարհագրական դիրքը, տվյալ քաղաքաշինական միջավայրի կառուցապատման և հատկազգծման առանձնահատկությունները, կլիմայական պայմանները, բարեկարգվող տարածքի գործառական նշանակությունը, կլիմայի փոփոխության անբարենպաստ հետևանքների ազդեցությունը և կանխարգելիչ միջոցառումների ապահովման պարտադիր պահանջը:

Չ/Յ	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր արժեքը միավորի համար ՉՉ դրամ	Ընդհանուր արժեքը ՉՉ դրամ
-----	--	----------------	--------	--	--------------------------

**Շինարարական աշխատանքներ**

**Բաժին 1 Հողային աշխատանքներ**

1	Գոյություն ունեցող հենապատի քանդում	մ3	144.80	16750	2425414
2	Գոյություն ունեցող ասֆալտբետոնե հարթակի քանդում	մ3	70.00	5655	395859
3	Գոյություն ունեցող փշալար ցանկապատի սպամոնտաժում ձեռքով և վեղադառց պատվիրատուին	զմ	200.00	2757	551445
4	Շին աղբի բարձում 1,0 մ3 շերտի տարողությամբ էքսկավատորով ավտոինքնաթափեր	1000մ3	0.215	799524	171738
5	Շին աղբի տեղափոխում լցակայան 1.0կմ	տ	451.56	263	118755
6	Գրունտի մշակում 1,0 մ3 շերտի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	1.227	663976	814698
7	Գրունտի տեղափոխում լցակայան 1.0կմ	տ	637.65	263	167694
8	Ավազակրայածային հարթեցնող շերտի իրականացում	մ3	2800.00	7897	22111221
<b>Ընդամենը 1 բաժնով</b>					<b>26756823</b>

**Բաժին 2 Հիմնական մասնաշենք (զննման մասնաշենք)**

8	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից	մ3	3.10	40618	125915
9	Միաձույլ ե/բ հիմքեր իրականացում B25 դասի բետոնից	մ3	7.60	61818	469814
10	Ամրան Ø16 A500C դասի	տ	1.026	485845	498359
11	Ամրան Ø10 Ac-I դասի	տ	0.083	513875	42695
12	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	0.044	485845	21207
13	Ներդիր դետալների տեղադրում	տ	1.60	1473088	2363540
14	Ե/բետոնե պատի իրականացում B25 դասի	մ3	12.60	87430	1101616
15	Ամրան Ø10 Ac-I դասի	տ	1.165	510761	594865
16	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	0.097	473388	46114
17	Մետաղական կանգնակ Կ-1 10 հատ	տ	0.43	63837	27514
18	Խողովակ պողպատե 120x50x3	մ	50.380	4543	228878
19	Մետաղական թիթեղ - 12x200	տ	0.051	905250	46168
20	Մետաղական պահանգ 6 հատ	տ	0.20	94847	18837
21	Խողովակ պողպատե 100x50x4	մ	23.10	5256	121416
22	Մետաղական կավարամած	տ	2.100	97238	204201
23	Մետաղական կավարամածի կոնստրուկցիա 12	մ	666.40	3289	2191654
24	Խողովակ պողպատե 180x100x4	մ	47.60	12677	603417
25	Մետաղական կապեր	տ	1.885	86760	163552
26	Խողովակ պողպատե 100x50x4	մ	8.32	5256	43731
27	Ջրհորդան	մ	48.00	3199	153557
28	Ջրահեռացման խողովակ Ø100մմ	մ	33.00	2747	90647
29	Ծածկերի մոնտաժում գործարանային արտադրության սենդվիչ պանելներից (պոլուպենոտրիտանե 100մմ)	100մ2	3.620	2472256	8949566
30	Ֆերմա Ֆ-1 (7 հատ) մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	2.720	1084583	2950284
31	Մետաղական կանգնակ	տ	4.96	63837	316764
32	Խողովակ պողպատե 120x120x5	մ	204.504	9306	1903074
33	Խողովակ պողպատե 180x140x5	մ	39.504	10464	413384
34	Խողովակ պողպատե 100x50x3	մ	59.00	3999	235934
33	Մետաղական թիթեղ - 12x200	տ	0.232	905250	210109
34	Մետաղական կավարամած	տ	0.928	63837	59254
35	Մետաղական կավարամածի կոնստրուկցիա 12	մ	476.00	3289	1565467
36	Ջրհորդան	մ	24.00	3199	76778

36	Ծածկերի մոնտաժում գործարանային արտադրության սենդվիչ պանելներից (պոլուպենտուրիտանե 100մմ)	100մ2	2.170	2472256	5364795
37	Մետաղական կանգնակ	տ	4.96	63837	316764
38	Խողովակ պողպատե 120x120x5	մ	204.504	9306	1903074
39	Խողովակ պողպատե 180x140x5	մ	39.504	10464	413384
40	Խողովակ պողպատե 100x50x3	մ	59.00	3999	235934
39	Մետաղական թիթեղ - 12x200	տ	0.232	905250	210109
40	Մետաղական կավարամած	տ	0.762	63837	48619
41	Մետաղական կավարամածի կոնստրուկցիա 12	մ	238.00	3289	782734
42	Ծածկերի մոնտաժում գործարանային արտադրության սենդվիչ պանելներից (պոլուպենտուրիտանե 100մմ)	100մ2	2.170	2472256	5364795
43	ամրացման դետալներ	հատ	245.00	299	73250
43	Կախիչների մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	0.342	63837	21858
44	Մետաղական Կախիչների կոնստրուկցիա 12	մ	107.00	3289	351901
45	Զրհորդան	մ	24.00	3199	76778
46	Պատերի մոնտաժում գործարանային արտադրության սենդվիչ պանելներից (պոլուպենտուրիտանե 100մմ)	100մ2	5.120	3031096	15519213
47	Մետաղական էլեմենտների մակերեսների նախաներկում ԴՓ-021 նախաներկով	մ2	379.03	130	49433
48	Մետաղական էլեմենտների մակերեսների ներկում ջերմակայուն եմալով <b>Պատեր Առաստաղ</b>	մ2	379.03	4353	1649814
49	Պատերի իրականացում գիպսովարաթղթից 12մմ /2 շերտ - Գիպսակարտոնե Սալ 12,5մմ+Գիպսակարտոնե Սալ 12,5մմ ջրակայուն/	մ2	433.00	11525	4990131
50	Միջնորմերի իրականացում գիպսովարաթղթից 12մմ /2 շերտ - Գիպսակարտոնե Սալ 12,5մմ+Գիպսակարտոնե Սալ 12,5մմ ջրակայուն/	մ2	900.76	16677	15021663
50	հանքաբամբակից շերտի տեղադրում 100 մմ հաստությամբ	մ2	775.00	6306	4887275
51	Առաստաղի իրականացում առմադրոնգ	մ2	740.00	11895	8802514
52	Պատերի ներկում լատեքսային	մ2	2076.62	2365	4910853
53	Պատերի Պրեագրանիտե սալիկ	մ2	157.90	13218	2087129
<b>ՊԵՏՈՒՆՆԵՐ</b>				0	
54	Այլումինե, բրկով,60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ, բացվող	մ2	33.10	109574	3626889
55	Այլումինե, բրկով,60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ խուլ	մ2	75.80	61364	4651404
56	ներքին պատուհանագոք	զմ	4.000	2990	11959
57	Արտաքին պատուհանագոք	զմ	63.640	2990	190272
<b>ԴՈՆԵՐ</b>				0	
58	Դռոժ Մետաղապլաստե բրկով	մ2	95.60	70585	6747932
59	Այլումինե, բրկով, սպիտակ, 60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ	մ2	24.00	126014	3024344
<b>Հատակներ</b>					
60	Զրամեկուսացում իզոգամ	մ2	750.00	1600	1200210
61	պենոպլեքս 3սմ	մ2	750.00	1430	1072825
62	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 60մմ հաստությամբ Պողպատե, ամրանային, եռակցված, BP d=4,0մմ, բջիջը 100x100մմ ցանցով	100մ2	7.20	440295	3170127
63	Լամինատե հատակ	մ2	196.40	6678	1311583
64	Լամինատե շրիշակ	մ	102.80	918	94336
65	Պրեագրանիտե սալիկ	մ2	554.60	13218	7330727
66	Պրեագրանիտե շրիշակ h=100 մմ	մ	111.60	1231	137361
<b>Ընդամենը 2 բաժնով</b>					<b>131490297</b>
<b>Բաժին 3 Մեքենաների մանրամասն զննման մասնաշենք</b>					
71	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	0.134	510761	68442

72	Ներդիր դետալների տեղադրում	տ	0.23	949744	220436
73	ե/բետոնե պատի իրականացում B25 դասի	մ3	3.50	87430	306004
74	Ամրան Ø10 Ac-I դասի	տ	0.265	513875	136165
75	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	0.035	473388	16429
76	Մետաղական կանգնակ Կ-2 4 հատ	տ	0.25	63837	15696
77	Խողովակ պողպատե 120x120x3	մ	20.152	9306	187531
78	Մետաղական թիթեղ - 12x270	տ	0.027	905250	24876
	Մետաղական շրջանակ			0	
79	Մետաղական կանգնակ	տ	2.29	63837	146124
80	Խողովակ պողպատե 180x180x5	մ	76.30	21601	1648188
81	Խողովակ պողպատե 100x50x3	մ	35.00	3999	139961
81	Մետաղական թիթեղ - 12x270	տ	0.027	905250	24876
82	Մետաղական կավարամած	տ	0.646	63837	41233
83	Մետաղական կավարամածի կոնստրուկցիա 12	մ	331.20	3289	1089250
84	Ծածկերի մոնտաժում գործարանային արտադրության սենդվիչ պանելներից (պլուսպենոտրիտանե 100մմ)	100մ2	1.130	2472256	2793649
85	Ֆերմա Ֆ-2 (5 հատ) մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	0.555	1084583	601402
86	Կախիչների մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	0.342	63837	21858
87	Մետաղական Կախիչների կոնստրուկցիա 12	մ	107.00	3289	351901
88	Պատերի մոնտաժում գործարանային արտադրության սենդվիչ պանելներից (պլուսպենոտրիտանե 100մմ)	100մ2	1.750	3031096	5304419
89	Մետաղական էլեմենտների մակերեսների նախաներկում ԴՓ-021 նախաներկով	մ2	106.02	130	13827
90	Մետաղական էլեմենտների մակերեսների ներկում ջերմակայուն եմալով	մ2	106.02	4353	461478
91	Միջնորմերի իրականացում գիպսավարաթղթից 12մմ /2 շերտ - Գիպսակարտոնե Սալ 12,5մմ+Գիպսակարտոնե Սալ 12,5մմ ջրակայուն/	մ2	26.40	16677	440264
92	հանքաբամբակից շերտի տեղադրում 100 մմ հաստությամբ	մ2	26.40	6306	166483
<b>ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ</b>					
93	Երկփեղկանի մետաղպատիկ ՊՎԽ պրոֆիլից երկխցիկային ապակիով պատուհանների տեղադրում բացվող	մ2	5.45	52597	286656
94	Երկփեղկանի մետաղպատիկ ՊՎԽ պրոֆիլից երկխցիկային ապակիով պատուհանների տեղադրում խուլ	մ2	1.56	44927	70087
<b>ԴՈՆԵՐ</b>					
95	Դուռ մետաղապլաստե, բլոկով	մ2	3.96	56433	223475
96	Դարպաս սերտավոր	մ2	32.76	65747	2153867
<b>Հատակներ</b>					
97	Հարթեցնող շերտի իրականացում թեթև բետոնից	մ3	10.04	45909	460928
98	Լամինատե հատակ	մ2	2.80	6678	18699
99	Լամինատե շրիշակ	մ	5.80	918	5322
100	Պրեսգրանիտե սալիկ	մ2	97.60	13218	1290081
101	Պրեսգրանիտե շրիշակ h=100 մմ <b>զնման հոր 2 հատ</b>	մ	28.30	1231	34833
102	ե/բետոնե կոնստրուկցիաների իրականացում B25 դասի	մ3	14.00	92554	1295761
103	Ամրան Ac-I դասի	տ	1.400	513875	719424
	Ընդամենը 3 բաժնով			0	<b>20779624</b>
<b>Բաժին 4 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ</b>					
				0	
109	ե/բետոնե պատի իրականացում B25 դասի	մ3	3.40	87430	297261
110	Ամրան Ø10 Ac-I դասի	տ	0.265	513875	136165
111	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	0.035	485845	16862
110	Ներդիրների դետալներ (Նդ-1) (10 հատ)	տ	0.134	1186306	158965
111	Մետաղական կանգնակ Կ-3 2 հատ	տ	0.14	63837	9036
112	Խողովակ պողպատե 120x120x5	մ	7.276	9306	67709

113	Մետաղական թիթեղ - 12x270	տ	0.014	905250	12438
	Մետաղական շրջանակ			0	
114	Մետաղական կանգնակ	տ	1.69	63837	107770
115	Խողովակ պողպատե 180x180x5	մ	58.30	21601	1259363
116	Խողովակ պողպատե 100x50x3	մ	17.70	3999	70780
117	Մետաղական կավարամած	տ	0.552	63837	35257
118	Մետաղական կավարամածի կոնստրուկցիա 12	մ	283.20	3289	931387
119	Զրահեռացման խողովակ Ø100մմ	մ	15.00	2747	41203
120	Ծածկերի մոնտաժում գործարանային արտադրության սենդվիչ պանելներից (պոլուպենոտրիտանե 100մմ)	100մ2	1.030	2472256	2546423
121	ամրացման դետալներ	հատ	210.00	299	62786
121	Ֆերմա Ֆ-3 (5 հատ) մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	0.555	1084583	601402
122	Կախիչների մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	0.256	63837	16342
123	Մետաղական Կախիչների կոնստրուկցիա 12	մ	80.00	3289	263104
124	Պատերի մոնտաժում գործարանային արտադրության սենդվիչ պանելներից (պոլուպենոտրիտանե 100մմ)	100մ2	1.380	3031096	4182913
125	Մետաղական էլեմենտների մակերեսների նախաներկում ԴՓ-021 նախաներկով	մ2	79.33	130	10346
126	Մետաղական էլեմենտների մակերեսների ներկում ջերմակայուն էմալով	մ2	79.33	4353	345287
127	Միջնորմերի իրականացում գիպսովարաթղթից 12մմ /2 շերտ - Գիպսակարտոնե Մալ 12,5մմ+Գիպսակարտոնե Մալ 12,5մմ ջրակայուն/	մ2	76.00	16677	1267426
<b>ԴՈՆԵՐ</b>					
128	Դուռ մետաղապլաստե, բլոկով	մ2	8.52	56433	480810
129	Երկփեղկանի մետաղապատիկ ՊՎԽ պրոֆիլից երկխցիկային ապակիով պատուհանների տեղադրում	մ2	2.16	56976	123069
<b>Հատակներ</b>				0	
	130	Հարթեցնող շերտի իրականացում թեթև բետոնից	մ3	8.60	45909
131	Պրեսգրանիտե սալիկ	մ2	86.00	13218	1136752
132	Պրեսգրանիտե շրիշակ h=100 մմ	մ	35.00	1231	43079
	<b>Ընդամենը 4 բաժնով</b>				<b>14618754</b>
<b>Բաժին 5 ՄԻԱԶՈՒՅՆ ՀԵՆԱՊԱՏ</b>					
133	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից	մ3	23.00	40618	934211
134	Ե/բետոնե հենապատի իրականացում B25 դասի	մ3	172.60	95735	16523796
135	Ամրան Ø12 A500C դասի	տ	4.354	485845	2115425
136	Ամրան Ø10 Ac-I դասի	տ	6.974	513875	3583604
137	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	2.064	485845	1002788
138	Ներդիրների դետալներ	տ	0.228	1651222	375653
139	հիդրոմեկուսացում 2 շերտ բիտումի քումով	100մ2	2.634	59378	156420
140	Գրունտի մշակում 1,0 մ3 շերտի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.300	663976	199193
141	Գրունտի տեղափոխում լցակույտ 1.0կմ	տ	54.00	263	14201
142	խամբարբետոնե հիբեր իրականացում B7,5 դասի բետոնից	մ3	300.00	41797	12539080
143	Երկաթբետոնե ժապավենային հիմքերի իրականացում B20 դասի բետոնից	մ3	108.40	62906	6818990
144	Ամրան Ø12 A500C դասի	տ	3.450	485845	1676165
145	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	2.471	485845	1200523
146	Գրունտի մշակում 1,0 մ3 շերտի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.110	663976	73037
147	Գրունտի տեղափոխում լցակույտ 1.0կմ	տ	19.80	263	5207
148	խամբարբետոնե հիբեր իրականացում B7,5 դասի բետոնից	մ3	110.00	41797	4597663
149	Դրսի պարիսպի իրականացում B20 դասի բետոնից	մ3	85.00	62906	5346994

150	Ամրան Ø12 A500C դասի	տ	2.674	485845	1299150
151	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	1.870	485845	908530
152	Ներդիրների դետալներ (Նդ-1) (223 հատ)	տ	0.588	1651222	970919
153	գոյություն ունեցող հիմքի վերանորոգում	մ3	15.00	62906	943587
154	Ներդիրների դետալներ (Նդ-1) (223 հատ)	տ	0.781	1651222	1288779
155	Կանգնակ Կ-1 (223 հատ) մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	2.338	63837	149262
156	Մետաղական խողովակ 60x60x3	մ	446.00	3154	1406798
157	Մետաղական թիթեղ - 3x60	տ	0.019	905250	17159
158	2.0 x 2.5մ չափերի մոդուլային ցանկապատ	մ2	1100.00	4673	5140378
159	Երկաթբետոնե ժապավենային հիմքերի իրականացում B20 դասի բետոնից	մ3	64.50	62906	4057425
160	Ամրան Ø12 A500C դասի	տ	0.776	485845	377231
161	Ամրան Ø10 Ac-I դասի	տ	3.352	513875	1722643
162	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	2.788	485845	1354296
163	Ներդիրների դետալներ (Նդ-2) (270 հատ)	տ	0.810	1651222	1337490
164	Կանգնակ Կ-1 (270 հատ) մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	4.190	63837	267504
165	Մետաղական խողովակ 70x70x3	մ	675.00	3692	2492385
166	Մետաղական թիթեղ - 3x60	տ	0.032	905250	29330
167	2.0 x 2.5մ չափերի մոդուլային ցանկապատ	մ2	800.00	4673	3738457
168	Ներդիրների դետալներ (Նդ-1) (30հատ)	տ	0.105	1651222	173378
169	Դարպասների մետաղական կոնստրուկցիաներ տեղադրում	տ	2.025	1480545	2998103
170	Շրջանակի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	5.332	63837	340375
171	Մետաղական խողովակ 160x80x5	մ	250.00	7968	1991965
172	Մետաղական խողովակ 30x30x3	մ	400.00	1063	425152
173	Պրոֆիլավորված թիթեղ	100մ2	3.750	564281	2116053
174	Բազալտե երեսապատում	մ2	52.60	30034	1579791
175	Փշալար	գ.մ.	340.00	1935	657896
	<b>Ընդամենը 5 բաժնով</b>				<b>94946987</b>
<b>Բաժին 6 Մուտքի ճանապարհ</b>					
1	Գոյություն ունեցող ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ3	96.00	5655	542893
2	բարձում 1,0 մ3 շերտի տարողությամբ էքսկավատորով ավտոինքնաթափեր	1000մ3	0.096	799524	76754
3	Շին աղբի տեղափոխում լցակայան 1.0կմ	տ	192.00	263	50494
